№ 55 Ապրիլ 2 (14) 1880 Ապրիլ 2 (14) № 55

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբլի։ Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի Тифлисъ. Редакція „Мшакъ"

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Ռացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

«Голосъ» լրագիրը հրէաների մասին։—Ներքին տեսութիւն։ Հայոց թատրոն։ Ներքին լուրեր։—Արտաքին տեսութիւն։ Նամակ Գերմանիայից։ Նամակ Թիւրքիայից։—Յայտարարութիւններ։—Բանաստեղծական խենթը։

«ГОЛОСЪ» ԼՐԱԳԻՐԸ ՀՐԷԱՆԵՐԻ ՄԱՍԻՆ

—

Ռուսաց «Голосъ» լրագիրը տպել է իր № 76 մէջ մի յօդուած հրէաների մասին, որից մենք արժանի ենք համարում քաղուածք անել մեր ընթերցողներին լրագրի մտքերի հետ ծանօթացնելու համար։

Հրէաների դէմ հալածանքները, ասում է ռուս լրագիրը, որոնց դեռ նորերումս դատապարտել է Բերլինի կոնգրէսը, պէտք է միշտ դժբաղդութիւն համարվեն այն երկրի համար, որտեղ այդ հալածանքները պատահում են։ Լրագրութեան պարտաւորութիւն է զգուշացնել իր հայրենիքը այդ տեսակ դժբաղդութիւնից։

Այն ժամանակից յետոյ, երբ Ռուսաստանում յայտնվեցաւ ըստորերկրեայ, յեղափոխիչ շարժումը, որ ամօթ է բերում մեր ռուսաց երկրին, շարունակում է ռուս թերթը, շատերը սկսեցին հաստատել թէ ռուս անարխիստների առաջնորդները հրէաներն են։ Այդ մեղադրանքը շատ հասարակ դատողութեան վրա էր հիմնված, յեղափոխութեան գործի համար փող է հարկաւոր, իսկ հրէաները փող ունեն, ուրեմն հրէաներն են անիշխանական կուսակցութեան առաջնորդները։

Այն իրողութիւնը որ Մլոդեցկի, որ յանդգնեցաւ կոմս Լորիս-Մելիքովի վրա ատրճանակ արձակել, հրէական ծագումից էր, բաւական էր, որ կրկին սկսէին մեղադրել բոլոր հրէաներին։

Հրէաները, ասում է «Голосъ» լրագիրը, նոյնպիսի հպատակներ են ռուսաց պետութեան, ինչպէս և նրա միւս հպատակները։ Եթէ այդ ճշմարտութիւնը դեռ ևս ամենքը չեն ըմբռնում, դրա պատճառը նոյն իսկ հրէաների մեր երկրի մէջ առանձնական դրութիւնն է։ Երբ որ բոլոր ռուս հպատակների հաւասարութեան սկզբունքը օրէնքի առջև կը տարածվի և այն ռուս քաղաքացիների վրա, որոնք մովսիական դաւանութեան են պատկանում, այն ժամանակ փոքր առ փոքր կը վերանան և այն նախապաշարմունքները, որոնք արմատացած են ժողովրդի մէջ հրէաների դէմ։ Թող ռուս հրէայի իրաւունքները հաւասար լինեն մնացած ռուս հպատակների իրաւունքների հետ, աւելացնում է ռուս թերթը,—և ռուս ազգի թշնամութիւնը հրէաների դէմ ինքն իրան կանհետանայ։

Անգլիական «Times» լրագիրը շատ ուղիղ է նկատում որ Ռուսաստանում օրէնքները և վարչութիւնը այնքան մեծ ազդեցութիւն ունեն ազգի բարոյական տրամադրութեան վրա, որ բաւական է մի նոր և հաւասարական օրէնք հրատարակվի հրէաների վերաբերութեամբ,—և ռուս ժողովրդի միջից իսկոյն կանհետանայ ատելութիւնը դէպի հրէաները։

Դորանից յետոյ «Голосъ» լրագիրը ապացուցանում է թէ ինչ պատճառով նա անկարելի է գտնում կասկածել հրէաներին անարխիական գործին համակրութեան մէջ։ Անարխիայի (անիշխանութեան) գլխաւոր նպատակն է ոչնչացնել դրամագլուխ, ուրեմն միթէ միամտութիւն չէ կարծել, որ հրէաները կը զոհեն իրանց կապիտալները նոյն իսկ կապիտալը ոչնչացնելու նպատակով։ Կապիտալի գոյութիւնը ամենալաւ գրաւական է մի որ և է դասակարգի պահպանողական և ոչ թէ յեղափոխիչ, քանդող ուղղութեան։

ԽԵՆԹԸ

ԱՐԿԱԾՆԵՐ ՎԵՐՋԻՆ ՌՈՒՍ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

—

—Այժմ տեսնում էք, շարունակեց պ. Դուդուկչեանը,—որ այդ բոլոր չարագործութիւնների մէջ մի ներքին կապ կայ, մի գաղտնի և դժոխային նպատակ կայ։ Ես աւելորդ եմ համարում խօսել մանաւոր երևոյթների վրա, և ցոյց տալ, որ տեղական իշխանութեան պաշտօնեաները շատ անգամ աշխատել են արհեստական կերպով սով պատճառել հայաբնակ գաւառներում, որպէս զի քրդերի և չերքէզների սրից ազատ մնացած հայերին կոտորեն քաղցածութիւնով։ Դա հրէշաւոր մի սպանութիւն է, որին ընդունակ է անգութ, անողորմ Թուրքը միայն։ Մաչել ժողովուրդը աղքատութիւնով, տնտեսապէս մնանկացնել նրան, զրկել ապրուստի բոլոր միջոցներից,—ահա գլխաւոր զէնքերը, որոնցմով Թուրքը աշխատում է այժմ ոչնչացնել հայ տարրը։ Նա գիտէ, որ ուրիշ զէնքով դժուար է մահացնել մի ժողովուրդ, որի զօրութիւնը կայանում է իր աշխատասիրութեան և նիւթական կարողութեան մէջ։ Չէյթունի հայերը վարուցանքի տեղ չունեն. նրանց ապրուստի և արդիւնաբերութեան գլխաւոր աղբիւրները են երկաթի հանքերը, որ բովազործում են նրանք, պատրաստում են զանազան տեսակ գործիքներ, կամ այնպէս անդադրաստ տանում են մերձաւոր գաւառները, և վաճառելով, փոխարէնը գնում են ինչ որ իրանց պէտք է։ Թուրքիան մի քանի անգամ փորձ փորձեց խլել զէյթունցիների ձեռքից այդ հանքերը, միայն քաջ լեռնաբնակների սաստիկ ընդդիմադրութիւնը կարողացաւ փրկել իրանց ապրուստի գլխաւոր հարստութիւնը։ Վանայ հերդեմը այդ տեսակ մեքենայութիւնների մի ճշգրիտ օրինակ կարող է համարվել։ Հայերը այս քաղաքում բաւական հարստացած էին. մի գիշերվայ մէջ նրանց բոլոր խանութները կրակի մատնեցին։ Զը նայելով հայերի անդադար բողոքներին, տեղական իշխանութիւնը մինչև անգամ քննութիւն ըսկսել չը կամեցաւ, որ յայտնվին չարագործները։ Որովհետև ինքն իր վրա քննութիւն սկսել չէր ցանկանում....

—Մեզ մինչև այսօր զարմացնում էր այն միտքը, թէ ինչու Թուրքիան այնքան չողոքորթում է քրդերի և չերքէզների ցեղապետներին, չողոքորթում է նրանց հոգևոր գլուխներին կամ չէյխերին, որոնք իրանց անկարգութիւններով ոչ սակաւ հոգսեր են պատճառում կառավարութեանը։ Դրանք շատ անգամ հարկեր չեն վճարում, շատ անգամ անպէտք խումբերով ասպատակում են այս և այն գաւառները։ Միթէ, մտածում էինք մենք, եթէ իշխանութիւնը ցանկանայ, չէ կարող զսպել այդ աւազակներին։ Հիմայ հասկանում ենք, որ Թուրքիային պէտք էր իր ձեռքում ունենալ այսպիսի գործիքներ։ Նպատակը՝—բացայայտ է....

Պ. Դուդուկչեանը, կարծես, աշխատում էր այս գիշեր դուրս թափել բոլոր դառնութիւնները, որ ծանրացած էին նրա սրտի վրա։ Ցաւագնեալ ժողովրդի ցաւը, նրա անբախտ վիճակը, նրա տխուր ապագան, որ նկարվում էր նրա աչքի առջև իր սև գոյներով,—այդ բոլորը լցրել էին նրա հոգին մի արդար վրդովմունքով։

—Հանգամանքները, կեանքի պայմանները, ասաց նա,—սարսափեցնում են մարդուն իր նմանների հետ վարվել այնպէս, որպէս վարվում են օտարները իր հետ.—չարին չարով պատասխանել։ Ուրիշ հնար չը կայ։ Բոլոր արարածների մէջ մարդը միայն է, որ գազաններից աւելի անգութ և աւելի անիրաւ կերպով է վարվում իր նմանների հետ։ Գազանը գոնէ միանգամից մահացնում է և հանգստացնում է իր զոհին։ Բայց մարդը յաջորդաբար է վարվում։ Նա տանջում է, ճնշում է, բարոյապէս և մտաւորապէս մաշում է, և իր զոհի կենսական բոլոր ուժերը սակաւ առ սակաւ սպառելով, այնպէս է սպանում։ Դա մի սարսափելի սպանութիւն է։ Այսպիսի սպանութիւն գործելու ընդունակ է մարդը միայն։ Այսպիսի սպանութիւններ կատարվում են ոչ միայն մասնաւոր անհատների վերաբերութեամբ, այլ ամբողջ ազգերի վերաբերութեամբ ևս։ Մի այսպիսի սպանութիւն սպառնում է մեզ։ Միթէ սոյն նպատակով չեն վարվում մեզ հետ Թուրքերը, քրդերը և չերքէզները։ Միթէ սոյն պատճառներից չէ, որ այսօր Հայաստանը մեծ մասամբ դատարկվել է հայերից։

Պ. Դուդուկչեանի երկար բացատրութիւնների միջոցին Վարդանը լսում էր խորին համակրութեամբ։ Նա մի դառն, հեգնական ժպիտով պատասխանեց.

—Հայոց ժողովուրդը մի զարմանալի ժողովուրդ է. նրան սպանելը, եթէ չասեմ անհնարին է, կարող եմ ասել, որ շատ դժուարին է։ Նա այն բազմագլխեան առասպելական վիշապն է, որ կոչվում է Հիդրայ, որի իւրաքանչիւր ջախջախված և կտրված գլխի տեղ բուսնում է մի նորը և աւելի զօրաւորը։ Դարերի ընթացքում, համաշխարհական դարբնոցի սալի վրա, հայը այն աստիճան ծեծվեցաւ, տաշվեցաւ և կոփվեցաւ, որ ստացաւ երկաթի ամրութիւն։ Նրան ջախջախելը շատ հեշտ չէ. նա չափազանց տոկուն է.... Հայը տարաւ, հայը համբերեց ամենամեծ մոնգոլների բարբարոսութիւններին, որոնց համեմատութեամբ Թուրքիայի այժմեան մոնգոլական սերունդը պէտք է ճանճեր համարել։ Հայի երկրի վրայով անցան Մանգուխանի, Լենկ-Թէմուրի, Չինգիս-խանի, Հուլաւունի և դրանց նման մարդկային հրէշների արիւնարբու հրոսակները։ Նրանք անցան հեղեղների և փոթորիկների նման, ջարդեցին, ջարդվեցան, և վերջապէս անհետացան, բայց հայը դարձեալ մնաց։ Այժմեան մոնգոլական Թուրքիան, աշխատելով սպանել արդիւնաբերող և տերութեան գանձարանը լցնող հայերին, անգիտակցաբար սպանում է ինքն իրան։ Նրա այժմեան ֆինանսական մնանկութիւնը այդ սպանութեան հետևանքն է։ Վաղեմի Թուրքիան աւելի լաւ էր հասկացել հայ տարրի օգտաւէտութիւնը իր պետութեան հաստատութեան համար։ Նա ոչ միայն առանձին հոգ էր տանում աշխատասէր հայ գիւղացու հանգստութեան համար, այլ պետութեան գանձային ամբողջ կառավարութիւնը յանձնել էր հայ դրամատէրների ձեռքը, և մեր սառաֆները ոչ սակաւ անգամ ազատում էին պետութիւնը ֆինանսական ամենադժուարին ճգնաժամի ժամանակ։

Առաւօտը մօտ էր լուսանալու, տակաւին խօսում էին մեր տաք գլուխ խորհողները։ Յետոյ նրանք սկսեցին խօսել ինչ-որ պատրաստութիւնների և կարգադրութիւնների մասին։ Երբ խորհուրդը աւարտված էր, պ. Դուդուկչեանը հանեց իր ծոցից երեք այցատոմս, և տալով իր բարեկամներին, ասաց.

—Ես բոլորովին հաւատում եմ ձեզ. այժմ դուք կարող էք գիտենալ իմ ով լինելը և իմ իսկական անունը։

Այցատոմսերի վրա ֆրանսիական գեղեցիկ տառերով տպված էր Լ. Սալման։

Պ. Լեոն Սալմանի հայրը՝ Թորոս Չէլէբին *) մահմետականութիւն ընդունած հայ կաթոլիկ էր։ Թէ ինչ հանգամանքների պատճառով նա փոխեց իր կրօնը, դա մի երկար պատմութիւն է։ Մենք այսքանը միայն կասենք, որ Թորոսին մեղադրեցին մի Թուրք օրիորդի հետ յարաբերութիւններ ունենալու մէջ, և նա սպանումից ազատ մնալու համար ստիպվեցաւ մահմետականութիւն ընդունել և ամուսնանալ զեղեցիկ Ֆաթիմայի հետ,—այսպէս էր օրիորդի անունը։ Լեոնի ծնունդից յետոյ Ֆաթիման վախճանվեցաւ և փոքրիկ երեխան մնաց հօր խնամատարութեան ներքոյ, որին սաստիկ տանջում էր այն միտքը, որ իր զաւակը կը կրթվի և կը մեծանայ իրան ատելի դարձած մի օտար կրօնի մէջ։ Սալմանը (մահմետականացած Թորոս Չէլէբին) Թողեց իր հայրենիքը՝ Անգուրիան և տեղափոխվեցաւ Կ. Պոլիս։ Այստեղ ոչ ոք չէր ճանաչում նրան։ Նա իր զաւակը յանձնեց ֆրերների միաբանութեանը, իսկ ինքը անհետացաւ։ Փոքրիկ Լեոնը մեծացաւ կաթոլիկների մի կուսանոցի մէջ, և յետոյ 12 տարեկան հասակում տարվեցաւ Իտալիա։ Իր սկզբնական ուսումը ստացաւ նա կղերի ձեռքից։ Նա անցկացրեց մի քանի տարի Վենետիկի ս. Ղազարի վանքում, և այստեղից հեռանալով, մտաւ Վիէննայի միխիթարեանների վանքը, բայց ոչ մի տեղ հիմնաւոր դիտութիւն չը սովորեցաւ։ Վերջապէս մի կնոջ սէրը դուրս քարշեց նրան վանքային ապականված մթնոլորտից և ձգեց

*) Չէլէբի կոչում են Թուրքերը հայ և յոյն վաճառականներին։

Գուցէ հրէական ցեղին կարելի է այլ և այլ ուրիշ պակասութիւններ վերաբերել, աւելացնում է ռուս թերթը, բայց երբէք կարելի չէ կասկածել հրէաներին անիշխանութեան ձգտումների մէջ։ Այդ տեսակ ձգտումն հակառակ է նրանց պահպանողական (կոնսերվատիվ) ցեղական բնաւորութեանը։

Իսկ եթէ հրէաների մէջ պատահում են Մլոդէցկու պէս այլանդակ, հիւանդոտ անհատներ, ասում է «Голосъ» լրագիրը, դրանք հետևանք են մի յայտնի կուսակցութեան փնասակար ուղղութեան, որտեղ կան ներկայացուցիչներ և Ռուսաստանի մնացած ազգութիւնների։ Այդտեղ ցեղական յատկութիւն ոչինչ նշանակութիւն չունի, այդտեղ ոչ ռուսաց, ոչ էլ հրէական ծագումը ոչինչ դեր չէ խաղում։

«Голосъ» լրագիրը վերջացնում է ասելով, որ այդ տեսակ խռովեալ ժամանակներում չը պէտք է երկպառակութիւն զցել Ռուսաստանի այլ և այլ ազգութիւնների և դաւանութիւնների մէջ, այլ բոլոր բարեմիտ անձինք պէտք է ջանան միութիւն հաստատել բոլորի մէջն էլ, ցանկանալով հաւասար իրաւունքներ բոլոր ռուս

Փարիզի քաղաքի մէջ։ Այստեղ նա սկզբում անց էր կացնում զուարճութիւններով լի դատարկ կեանք, անդադար անցկենալով մի կուսակցութիւնից դէպի միւսը, և մտնելով զանազան ընկերութիւնների մէջ, միայն խօսելու, բայց ոչ գործ չինելու համար։ Իսկ երբ սպառվեցան սիրուհու փողերը, այնուհետև աղքատութիւնը ստիպեց նրան ձեռք զարկել լուրջ աշխատանքի, գրում էր լրագրական զանազան յօդուածներ արևելքի վերաբերութեամբ և նրանով ապրում էր։ Բայց երբ յարուցվեցաւ վերջին արևելեան հարցը, նա թողեց Փարիզը, թողեց իր սիրուհին և դիմեց դէպի Կ. Պոլիս։

ԻԲ.

Պ. Սալմանի Բագրեանդի գաւառում յայտնվելուց դեռ մի ամիս առաջ, արզրումցի հաջի Միսաք անունով ջորեպանը բեռնաւորեց իր քարվանը և ճանապարհ ընկաւ դէպի Արզրում։ «Հաջի» մականունը ստացել էր նա այն պատճառով, որ երկու անգամ ս. Երուսաղէմ ուխտ էր գնացել, և եթէ Աստուած արժանի կանէր մի անգամ ևս գնալու նպատակ ունէր, որ խորհրդական թիւը լրանար։ Առհասարակ հաջի Միսաքը բարի քրիստոնեայ էր, և նրա ջերմեռանդութիւնը հասնում էր մինչև մանաւանութեան։

Ճանապարհների վրա բոլոր քաղաքներում, բոլոր գիւղերում և բոլոր իշխաններում ճանաչում էին հաջի Միսաքին։ Քան տարուց աւելի կը լինէր, որ այդ մարդը իր ջորիներով պտըտում էր Փոքր-Ասիայի և Հայաստանի մէջ, ու ծանրութիւններ էր տեղափոխում։ Հաջի Միսաքը մի հաստ ու պինդ մարդ էր, միջակ հասակով և սաստիկ արագաշարժ։ Նրա դէմքի գծագրութիւնը անհարին էր ճշտապէս որոշել, որովհետև ամբողջապէս ծածկված էր խիտ մազերով, որոնց միջից երևում էին ահագին հայկական քիթը և բոցավառ աչքերը միայն, որոնց խորութեան մէջ միշտ կարելի էր նկատել նրա բարեսրտութեան պայծառ արտայայտութիւնը։

Ամեն տեղից երբ անց էր կենում հաջի Միսաքի քարվանը, միշտ ընդհանուր ուրախութիւն էր պատճառում։ Ո՞վ ասես, նրանից մի բան չէր սպասում ստանալ. վաճառականը ապրանք էր

քաղաքացիներին, թագաւորի բոլոր հաւատարիմ հպատակներին։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՑ ԹԱՏՐՈՆ

Հինգշաբթի, մարտի 27-ին, հայոց մշտական դերասանական խումբը մասնակցութեամբ յայտնի թատրոնասէր Վահան Մամիկոնեանի ներկայացրեց «Կովերլէյի սպանումն»։

Մենք դիտաւորութիւն չունենք այդ ներկայացումն քննութեան տակ ձգելու, միայն չենք կարող մի քանի խօսք չասել այդ ներկայացման առիթով։ Նախ և առաջ մենք կարող ենք շնորհաւորել Թիֆլիսի հասարակութեանը այն ուրախալի երևոյթը, որը նշմարվում է այս վերջին ժամանակներում։ Վերջապէս հայ թատրոնասէրները ձեռք են մեկնում մշտական խմբին և օգնում են, որքան թոյլ են տալիս նոցա իրանց այժերը. այդպէս վարվեցաւ պ. Սեդրակ Մանդինեանցը, Բասլուէվի դերը խաղալով, և Վահան Մամիկոնեանը Արտուր Գօրդօնի և Բօժէր Կովէրլէյի դերերի մէջ։

Վերջապէս մեր թատրոնական մանաժողովն էլ, մի կողմ դնելով իր անտեղի հպարտութիւնը, զգաց կարևորութիւն մասնաւոր անձերի մասնակցութեան մէջ և դիմեց նոցա օգնութեան։ Վաղուց հարկաւոր էր այդ անել։ Բայց մենք շատ և շատ ցաւում ենք, որ թատրոնական մանաժողովը հրաւիրում է թատրոնասէրներին մասնակցելու մի և նոյն մաշած-փտած պիէսաների մէջ։

Գոնէ թատրոնական մանաժողովը օգուտ քաղէր այն հանգամանքից, որ հայոց հասարակութիւնը, զզուած լինելով մանաժողովի ներկայացումներից, նորից այցելում է թատրոնը, երբ լսում է, որ այս կամ այն թատ-

---

սպասում, կինը իր պանդուխտ ամուսնից նամակ էր սպասում, ճանապարհների վրա գանվող մանր և խոշոր աստիճանաւորները կամ պաշտօնատարները այս և այն իրեղէններն էին սպասում ուտելու, խմելու և հագնելու համար։ Շատ անգամ պանդուխտ, հիւանդ, և ճանապարհների վրա նուաղած ու ընկած հայ գաղթականը սպասում էր, որ հաջի Միսաքի քարվանը կանցնի, և իրան մարդասիրաբար վեր առնելով, կը տանէ և ցանկացած տեղը կը հասցնէ։ Հաջի Միսաքի կամակատարութիւնը և նրա պատրաստակամութիւնը ամեն մարդու օգնելու մէջ, նրան սիրելի էին արել իր բոլոր ծանօթներին։—«Հաջի Միսաք, վերադարձին ինձ համար մի քանի հօխայ թամբաքու բեր»—«հաջի Միսաք, դահվէս պոծել է, դահվէ բեր»—«հաջի Միսաք, այս գէյթունի լուղը հասցրու մեր տանը»—այսպիսի պատուէրներ նա կատարում էր առանց մի փարայ ընդունելու և մինչև անգամ իր դրպանից ծախսելով։ Այս պատճառով ճանապարհների վարչութիւնները շատ խիստ չէին վարվում հաջի Միսաքի հետ. մաքսատներից նրա քարվանը անցնում էր ամենայն ապահովութեամբ և աստիճանաւորները չէին նեղացնում նրան։

Բեռնակիրը, և մանաւանդ ճանաչված բեռնակիրը, մեծ հաւատարմութիւն ունի արևելքում։ Նրան յանձնում են ամենաթանդագին ապրանքների հակեր, նրան յանձնում են տոպրակներով լի ոսկի և արծաթ, առանց որ և իցէ թղթերի կամ պաշտօնական դրագրութիւնների, և նա իր ստացած աւանդները տանում է և անկորուստ հասցնում է պատկանած տեղը։

Ամեն քաղաքում դիտէին, թէ երբ կը յայտնվի հաջի Միսաքը։ Նրա քարվանի ընթացքը այնքան կանոնաւոր էր, եթէ մի արտաքոյ կարգի դէպք պատահելու չը լինէր, նա մի ժամ ևս յետ չէր ընկնի սովորական օրից։ Բայց այս անգամ հաջի Միսաքի քարվանը բաւական դանդաղ էր ընթանում։ Զը նայելով նրա վեր առած հակերի փոքրիկ ծաւալին, նրանք բաւական ծանր էին երևում։ Հակերի մեծ մասը քառանկիւնի, երկայնաձև արկղիներ էին, երկաթի կապանքներով ամրացրած, և որոնց վրա անդլիական տառերով դրոշմված էին

բօնասէր մասնակցում է ներկայացման, գոնէ, ասում ենք մենք, օգուտ քաղէր այդ հանգամանքից և այդ ներկայացումները շրջապատէր այնպիսի պայմաններով, որոնք կարող էին հասարակութեանը չը զզուացնել և այն ներկայացումներից, որոնց մէջ մասնակցում են թատրոնասէրները։

Դորա համար հարկաւոր է, ինչպէս և միշտ, հետևեալը. հրաժարուել յայտնի փբտած բէպերտուարից և, երկրորդը, դերասաններին նախ պատրաստել և ապա բեմը դուրս թողնել։

Պատուելի թատրոնասէրի զեղեցիկ խաղը (ափսոս, որ նոյնը չէ կարելի ասել դիկցիայի մասին, որովհետև տեղ տեղ երգում է) տեղ տեղ սառն էր երևում։ Ի՞նչու։ Որովհետև նա ստիպված էր լինում մօտենալ դռներին և դերասաններին դուրս կանչել, նա ստիպված էր բեմի վրա դերասաններին և դերասանուհիներին նորանց դերը ասել, որովհետև նորանք իրանց դերերը չէին իմանում. նա ստիպված էր անբնական դիրք բռնել բեմի վրա, որովհետև միւսները չէին իմանում, որտեղ և ինչպէս կանգնել. մի խօսքով կարելի էր կարծել, որ առանց կրկնութեան էին խաղում։ Ի՞նչ է շինում պարոն բէժիսսորը, որը իր պաշտօնը վարելու համար առանձին վարձատրութիւն է ստանում։ գուցէ նա կարծում է, որ բաւական է բոլոր դերասանուհիներին թաշկինակներ մէկ ձեռքում բռնել տալ (այդ երեկոյ կարծես բոլոր դերասանուհիներին արդելված էր առանց թաշկինակների բեմը դուրս գալ) և ուրիշ ոչինչ։ Այդպէս վարվելով, թատրոնական մանաժողովը կարող է միայն նորան հասնել, որ ապագայում ոչ մի թատրոնասէր էլ չի կամենայ մասնակցել նորա ներկայացումներին։

Առհասարակ ամբողջ ներկայացումն թոյլ անցաւ. մենք համոզված ենք, որ եթէ պ. Մամիկոնեանը չը լինէր, հասարակութիւնը երկրորդ գործողութիւնից յետոյ կը փախչէր թատրոնից. դա էր համարեա միակ

«Պերսիա» և «Թեհերան» բառերը։ Քարվանը ըստ մեծի մասին ուղևորվում էր դիշերով։ Հաջի Միսաքը ասում էր, որ նա չէ ցանկանում ցերեկվայ ժամերի ժամանակ իր ջորիները յոգնեցնել։

Քարվանի մէջ կար մի երկրորդ անձնաւորութիւն ևս, որ իրան կոչում էր Մէլիք-Մանսուր. դա վաճառական էր, և իր ասելով՝ պարսկաստանցի հայ։

Վերջին 20—30 տարիների ընթացքում, պարսից կառավարութիւնը, բաւական մեծ վերանորոգութիւններ անելով զէնքերի փոփոխութեան մէջ, և նրանց եւրոպական ձևի վերածելով, հայերի առաջն բացվեցաւ վաճառականութեան մի նոր ասպարէզ, որոնք սկսեցին հայթայթել կառավարութեանը պահանջված զէնքերը։ Մէլիք-Մանսուրը այս տեսակ վաճառականներից էր և ջորիների կրած ծանր արկղները նրան էին պատկանում։ Մաքսատներում առանձին ուշադրութիւն չէին դարձնում այդ արկղների վրա, որովհետև իբրև տրանզիտ ապրանք, պէտք է անցկենային Պարսկաստան։ Այս տեսակ ապրանքների փոխադրութիւնը Տրապիզոնի, Արզրումի և Բայազէտի ճանապարհով դէպի Պարսկաստան, մի նոր բան չէր։

Մէլիք-Մանսուրը կը լինէր 36 տարեկան, նա բաւական համակրական դէմք ունէր, նրա միշտ ուրախ, միշտ ծիծաղկոտ բնաւորութիւնը և փոքր ինչ չաղակրատ լեզուն մի առանձին կեանք էին տալիս այդ մարդու անվերջ խօսակցութիւններին հաջի Միսաքի հետ, մանաւանդ երբ նա սկսում էր պատմել իր կեանքի հետաքրքիր արկածները, որ կատարվել էին հեռաւոր աշխարհներում։ Քարավանի ճանապարհորդութեան միակերպ ձանձրոյթը փարատելու համար այս տեսակ խօսակցութիւնները անհրաժեշտ են լինում։ Աւելի հետաքրքիր էր այդ հայոց «թափառական հրէայի» ձախ ձեռքի երեք մատերի կարվելու պատմութիւնը, որ պատահել էր Հնդկաստանում մի կռիվի մէջ, որ նա ունեցել էր վայրենիների հետ։

Մէլիք-Մանսուրը խօսում էր շատ արևելեան և արևմտեան լեզուներով, և իր ամբողջ կեանքում մարդիկների հետ զարկվելով, գիտէր նրանց բոլոր խորամանկութիւնները, գիտէր, թէ ինչպէս պէտք է վարվել մարդու հետ։ Եւ այս պատճառով, նա

խաղացողը, որը այժ էր տալիս հասարակ
թեանը դիմանալ անտանելի երկար անտրա
տաներին և միւս դերասանների և դերասանու
հիների կրիտիկայից ստոր խաղին։ Դերասա
նուհիներից Աստղիկը և մասամբ Սիրանուշ
փոքր ինչ շատ բարձր էին միւս դերասանու
հիներից, իսկ դերասաններից միայն Աւալեանց
իր բնական խաղով (Նեղ Գօրդօնի դերու
ցոյց տուեց թէ մանաժողովին և թէ հասա
րակութեան որ եթէ նա Փիլիպպոսի դերը (Դ
Կարլոսի մէջ) և նորանց նմանները փչացնում
դորանում մեղաւոր է ոչ թէ ինքն, այլ նորանց
որոնք նորան իր ամպլուայի դերերը չէն տա
լիս։

Ինչ և իցէ պարոն Մամիկոնեանցը, որ
յայտնի է Թիֆլիսի հասարակութեանը
բեմական ընդունակութիւններով, այս անգա
նորից ցոյց տուեց իր տաղանդը. մանաւան
զարմացրիչ էր նա պիէսայի ամենադժուար տե
ղերում։ Իսկոյն երևում էր, որ պատուե
թատրոնասէրը աշխատել էր, որքան կարելի է
մշակել այդ տեղերը, օրինակ, առաջի
գործողութեան երկրորդ պատկերում շոգենա
վրա, զարմանալի կերպով փոխում էր նա թ
երեսի արտայայտութիւնը, թէ շարժուածք
ները, մի խօսքով, միայն տաղանդաւոր թա
րոնասէրը կարող էր ներկայացնել մի և նոյ
ժամանակ երկու ամենեին հակառակ տիպե
կամ Կովէրլէի ամրոցում, երբ իր մ
(Գօրդօնին) մի կողմ տանելով, խորհուրդ
տալիս նրան լռել և իսկոյն փոխվելով իրա
ձևացնում է Կովէրլէյ, և վերջին ներկայաց
ման մէջ, երբ խելագարվում է։

Ցաւով ենք, որ պ. Վահան Մամիկոնեան
կը շարունակէ ժամանակ առ ժամանակ մ
նակցել հայոց ներկայացումներին։ Առհասա
րակ պէտք է նկատել, որ միայն թատրոնա
սէրների մասնակցութեամբ կարելի է հայ
բեմը պահպանել, պահպանել նորան կատա
րեալ անկումից. այդ դէպքում գոնէ օրինա
վերցնէինք վրացիներից։ Զանազան Սարդա
բեանցներից, Մելիք-Ադամեանցներից և ա

ներսից այն չէր, ինչ որ երևում էր դրսից։ Այստ
ամենայնիւ, հաջի Միսաքը մի առանձին յարգան
քով էր վերաբերվում դէպի այդ խորհրդաւոր ա
ձնաւորութիւնը, ոչ այն պատճառով միայն, ո
ինքը իբրև բեռնատար պարտաւոր էր պատ
իր վեր առած բեռների տիրոջը, բայց գտնում է
նրա մէջ մի ուրիշ բան, որ իսկապէս յարգել
էր։

Ամեն մի խան (քարվանսարայ) իջևանելի
պանդոկապետները խիստ գոհ էին մնում Մէլիք
Մանսուրից։ նա բաւական առատաձեռն էր
ոսկին շաղ էր տալիս աջուձախ։

—Դուք դրանց փչացնում էք, նկատում էր հ
ջի Միսաքը.—միւս անգամ մեզ անհնար կը մ
նի այդ աւազակներից մի բաժակ ջուր խմ
դրել։

—Վնաս չունի, պատասխանում էր նա ծիծա
ղելով,—ոսկու փայլը կուրացնում է մարդկան
աչքերը...

Քարվանը անվտանգ անցաւ Արզրումից և
շաբաթից յետոյ մտաւ Բայազէտի գաւառը։ Այ
տեղ Մէլիք-Մանսուրի բեռները սկսեցին հետզ
տէ փոխվել։ Արկղները գիշերով անհետանում էի
և նրանց փոխարէն ստացվում էին ուրիշ հակե
բոլորովին այլ տեսակ մթերքներով։ Այդ փոփ
խութիւնները պատահում էին, երբ քարվանը
ջևանում էր այս և այն հայաբնակ գիւղի մէ
Երբեմն յայտնվում էին Մէլիք-Մանսուրի մօտ
տեսակ անծանօթ մարդիկ, ինչ-որ անհասկանա
լեզուով խօսում էին նրա հետ և անհետանում
էին։

Վերջապէս քարվանը մօտեցաւ Տաճկաստանի
Պարսկաստանի սահմանին։ Նա անցաւ սահմանը
և ոտք կոխեց պարսից հողի վրա։ Բայց մինչ
այստեղ հասնելը, «Պերսիա» և «Թեհերան» մակ
դրութեամբ արկղներից ոչ մէկը չէր մնացել հաջ
Միսաքի ջորիների մէջքի վրա, և ինքը՝ Մէլիք
Մանսուրը՝ կեղծ վաճառականը անհետացել էր...

(Կը շարունակվի)

նցա նման անձերից բաղկացած խմբի ոյժից վեր է թատրոնական արհեստը։

Ի դէպս պ. Սարդարեանցի բենեֆիսի մասին. թատրոնական մասնաժողովին ներելի չէ ամեն մի դերասանին, որը առաջին անգամն է բեմը դուրս գալիս, բենեֆիսներ նշանակել։

Եթէ մասնաժողովը ամեն մի դերասանին ուզում է բենեֆիս տալ, գոնէ տեղերի գները սովորական նշանակէ։ Եթէ այդ երեկոյ տեղերի գները սովորական լինէին, զուցէ 1-ին, 2-դ և 3-դ կարգերը ամենևին դատարկ չը լինէին, այն ինչ մնացած բոլոր աթոռները ծախված էին։

Գները աւելացնելով չէ կարելի դէֆիցիտները ծածկել (եթէ ենթադրենք, որ բենեֆիսի կէսը մասնաժողովին է), այլ դրանով և ամեն մի դերասանին բենեֆիսներ տալով, նոքա կարող են աւելի ևս մեծանալ։

Մ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՆԻԺՆԻ-ՆՈՎԳՈՐՈԴԻՑ ստացանք տիկին Նինա Առաքելեանցից 25 ռուբլ յօգուտ Վասպուրականի հայ սովատանջների։

—

ՄՈՍԿՎԱՅԻՑ պ. Ս. Բաբանատան ուղարկում է մեզ 34 ռ. յօգուտ Վանի սովատանջների և գրում է մեզ հետևեալ նամակը։ «Կամենալով մի փոքրիկ օժանդակութիւն հասցնել Հայաստանի սովատանջ զաւակներին և որպէս զի այս վսեմ բոպէն կրթող նշանակութիւն ունենայ մանուկ սերունդի համար, ես իմ տանը մանկական ներկայացում սարքեցի, որից զոյացած արդիւնքը, 34 ռ. յանձնում եմ ձեզ, իբրև հասարակական պաշտօնեայի, որպէս զի ուղարկէք ուր հարկն է։ Միշտ կենդանի օրինակները աւելի զօրեղ, աւելի կրթող ազդեցութիւն են ունեցել, քան վերացական դաղափարները։ Ցանկալի է, որ այսպիսի մեծ ճգնաժամում, երբ հայութեան բաղդն է որոշվում, հասարակութեան գործող դասը ընդհանուր օգնութենից օգուտ քաղելով, աշխատէր ազդել մանուկ հայութեան վրա, ներշնչէր նրա մէջ ազգասիրական գաղափարներ։ Զուցէ այդպիսով ապագայում առիթ չէինք ունենայ դանդատվելու հայերի սառնասրտութեան վրա։»

—

ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻՑ պ. Մ. Ա. Պ—եան ուղարկելով մեզ 14 ռուբլ յօգուտ Վանի սովատանջների աւելացնում է։ «Ես ժողովեցի այստեղ 20 ռուբլ և յանձնեցի այդ գումարը մի պարոնի, որ նոյնպէս նուէրներ էր հաւաքում նոյն նպատակով։ Կարծեմ նա արդէն ուղարկել է իր ժողոված գումարը «Մեղու» լրագրին։ Իսկ ես շարունակելով հանգանակութիւնը հաւաքեցի ահա 14 ռուբլ հետևեալ անձինքներից։ Օշական գիւղի բնակիչ Մըկրտիչ Մօրիկեանց հաւաքեց 7 ռուբլ իր գիւղում, իսկ այստեղ հետևեալ պ. պ. տուեցին. Աբրահամ Մանուկեան 1 ռ., Նիկողոս Յովսէփեան 1 ռ., Յովհաննէս Մուրատեան 1 ռ., Ղազար Պապաջանեանց 3 ռ., և Վախտանգ Փարսատանեան 1 ռուբլ։ Ընդամենը 14 ռուբլ։»

—

ԵՐԵՒԱՆԻՑ կարապետ վարդ. Այվազեանից ստացանք 10 ռուբլ յօգուտ Վասպուրականի սովատանջների։

—

Ստացանք ցեխնվալցի Միքայէլ Յովհաննէսեան Մէլբուրնութեանցից 5 ռուբլ յօգուտ Վասպուրականի սովեալների։

—

«Արարատեան» ընկերութեան համար ստացանք 2 ռուբլ ԿԱՐԱՍՈՒԲԱՋԱՐԻՑ, պ. Յովակիմ Պէկլարեանից։

—

ՆԵՐՔԻՆ-ԱԳՈՒԼԻՍԻՑ ստացանք յօգուտ Վասպուրականի սովալուկների 5 ռուբլ։ Նուիրատուները սրանք են, որոնցից իւրաքանչիւրը մի մի ռուբլ են տուել։ Հայրապետ, Յովհաննէս, Թումիզար, Զուսրուխա և Լիզա Զարգարեանք։

—

Ռուսաց «Голосъ» լրագրում տպվեցաւ մի հետաքրքիր առաջնորդող յօդուած հրէաների մասին (№ 76)։ Լրագիրը այն կարծիքն է յայտնում որ հարկաւոր կը լինէր ռուսաց հրէաներին պետութեան միւս հպատակների հետ հաւասար քաղաքական իրաւունքներ տալ։

—

Կիրակի, 30-ին մարտի, կայացաւ Թիֆլիսի Ժողովարանում Թիֆլիսի փոխադարձ կրեդիտի ընկերութեան տարեկան ընդհանուր ժողովը։ Նախագահում էր Գէորգ Եւանգուլով։ Ընկերութեան տարեկան հաշիւը և զեկուցումը կարդացվելուց յետոյ, եղան վիճաբանութիւններ։ Խորհրդի պատգամաւորներ ընտրվեցան պ. պ. Գ. Եւանգուլով և Պ. Մելիք-Կարակօզով։ Վերատեսուչ յանձնաժողովի անդամներ ընտրվեցան պ. պ. Ա. Քիչմիշև, Գ. Տէր-Ալէքսանդրով և Ն. Գարսևով։

—

Խնդրում ենք մեր բաժանորդներից, որոնք իրանց հասցէն փոխում են, ուղարկել խմբագրութեանը երկու եօթ-կոպէկանոց փոստի մարկա և նոր ադրէսի հետ նամակի մէջ յիշել թէ մինչև այս ժամանակ որ քաղաքումն էին ստանում «Մշակը» որպէս զի գրքից ջնջենք նրանց հին ադրէսը և գրենք նորը։ Եթէ ոչ, մօտ հազար բաժանորդներին չենք կարող անգիր յիշել թէ պ. Կիրակոսեան կամ Մարտիրոսեան ինչ քաղաքումն էր ապրում և որ քաղաքից նրա հին ադրէսը պէտք է ջնջենք։ Նամակը պէտք է այս ձեով գրել. «Ես ստանում էի մինչև այժմ «Մշակ» լրագիրը այս ինչ քաղաքում (գրել քաղաքի անունը), իսկ այժմ խնդրում եմ ուղարկել ինձ ձեր լրագիրը այս հասցէով (գրել նոր հասցէն)։»

—

Հինդշաբթի, ապրիլի 3-ին, Ամարային թատրոնում կը լինի յօգուտ սովատանջների գրականական-երաժշտական երեկոյ կենդանի պատկերներով, երեկոյի նպատակին յարմար, նկարիչ Կոչէնի աշխատութեամբ։ Կը մասնակցեն՝ տ. Ն. Պ. Ղամբարեան, օր. Վ. Բ, Խոսրովեան, օր. Սիրանոյշ, պ. պ. Մէսէքի, Ադամեան և ուրիշներ։ Թատրոնական օրկէստրը կը կատարէ պ. Զուլաբեանի «Արշակ II»-ի ուվերտիւրան, իսկ օր. Սիրանուշը նոյն հեղինակի «Ave Maria» romance։ Յուսով ենք, որ մեր հասարակութիւնը անտարբեր չի մնա դէպի այսպիսի մի նպատակով տուած երեկոյ մանաւանդ, որ տեղերի գինը սովորականն է։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԳԵՐՄԱՆԻԱՅԻՑ

Բերլին, մարտի 31

Այստեղ նորերումս հիմնվել է մի ընկերութիւն, որ նպատակ ունի էլէկտրականութեանը որքան կարելի է նշանակութիւն տալ արուեստագործութեան մէջ և նրան գործադրել ոչ միայն իբրև լուսաւորող սկզբունք (լապտերներ), և իբրև միջնորդ զրաքրութեան մէջ (հեռագիր), այլ նոյնպէս իբրև շարժիչ ոյժ (motor)։ Օրինակ նպատակ կայ մի էլէկտրական երկաթուղի կառուցանել այստեղ քաղաքի մէջ, որ չինած կը լինի տների կուտերի մակերևոյթին։ Այս ընկերութեանը, որ «Electrotechnischer Verein» անուն է կրում, նախագահում է պ. Ստեֆան (Stephan), կայսրութեան փոստերի և հեռագիրների կառավարիչը։ Անդամների թւում երևելի արուեստագործներ և ուսումնականներ են գտնվում, ինչպէս պ. Վերնէր Զիմէնս, Հելմհոլց և Կիրխով պրոֆէսսորները և այլն։ Ընկերութիւնը երկու ամսվայ մէջ հասաւ իր անդամների թիւ վերաբերութեամբ 2000-ի, մի թիւ, որին սովորաբար դժուարութեամբ են հասնում որ և է ընկերութիւններ։

Այժմ էլէկտրականութիւնը օրվայ հարց է դարձել և նրան աշխատում են ամեն ձեով գործադրել։ Նորերումս, օրինակ, պ. Զիմէնս (Siemens) Լոնդոնում փորձեր է արել էլէկտրական լուսի ազդեցութեան վերաբերութեամբ բուսականութեան վրա և նրան աջողվել է ծաղիկների (գլխաւորապէս իացինտների) կոկոնները մի քանի ժամվայ մէջ ծաղկեցնել էլէկտրական լուսի ազդեցութեան միջոցով։ Այս փորձերը այստեղ, Բերլինի մէջ էլ, կրկնվեցան ընկերութեան վերջին նիստի ժամանակ։ Դա նոր գիւտ չէ, որ լոյսի կապոյտ և մանիշակագոյն ճառագայթները աւելի մեծ ֆիզիոլոգիական ազդեցութիւն ունեն, քան թէ կարմիր, դեղին և կանաչ ճառագայթները և որ էլէկտրական լոյսը գլխաւորապէս «ֆիզիոլոգիապէս ազդող» ճառագայթներից է բաղկանում, բայց այդ փորձերը ծաղիկների վրա բոլորովին նոր են։

Մի այլ պարոն գոր՝ է ածում էլէկտրական լոյսը և բժշկական հետազօտութեան համար, մանաւանդ ներքին օրգանների։ Երկաթի թելերը, որոնցով անցնում է էլէկտրական հոսանքը, նա շրջապատում է ապակիի մի բարակ խողովակով և մըտցնում է այդ խողովակը, օրինակ, բողազի, ականջի, կամ մի այլ օրգանի մէջ առհասարակ, որին պէտք է հետազօտի։ Այդպիսով հետազօտվող օրգանը ներսից լուսաւորվում է էլէկտրական հոսանքի լուսով։ Նրան աջողվել է մի ձուկի ստամոքսի մէջ այս տեսակ խողովակը մտցնել, որից ձուկը, չարունակելով լողալ, բոլորովին թափանցիկ դարձաւ և այն ատիճան թափանցիկ, որ կարելի էր նրա ներքին կազմուածքը հեշտութեամբ տեսնել։ Այս փորձը ձուկին բոլորովին չը վնասեց և դրանից յետոյ, երբ խողովակը հանեցին, նա կրկին առաջվայ տեսքը ընդունեց։

Այս անգամ թոյլ եմ տալիս ինձ գիտութեան շրջանից այսպիսի նորութիւններ հաղորդել, մըտածելով որ դրանք հետաքրքիր կարող են լինել «Մշակի» ընթերցողների համար։

«Մշակի» համարները կանոնաւոր կերպով ստանում եմ։ Դր. Նիկողոսեանի յօդուածները ես մեծ համակրութեամբ կարդում եմ և մանաւանդ հաւանում եմ նրա թէև երբեմն ծանր, բայց չափազանց բազմատեսակ և ճոխ լեզուն։

Կ. Պոլսի ընկերութիւնների մինչև այժմ չը մնալը ինձ զարմացնում է։ Դա ինչ տարօրինակ ձգտումն է, հայերի մէջ, անդադար և չարունակ նոր ընկերութիւններ հիմնել, փոխանակ աշխատել եղածները պահպանելու. և բոլորի ոյժերը կենտրոնացնելու։ Ես բոլորովին համաձայն եմ այն դատողութիւնների հետ, որ «Մշակը» անում էր այս առիթով։

Ստացայ «Die Oeconomische Lage» բրօշիւրի մի քանի օրինակներ և տարածեցի մեր բարեկամների մէջ։

Ահա ինչ է գրում ինձ այդ բրօշիւրի առիթով մեր բարեկամ հօլանդացի Ֆ. Դ., որին նոյնպէս ուղարկեցի բրօշիւրը։

«Իսկոյն վերջացրի «Die Oecon. Lage der Armenier in der Turkei» բրօշիւրի ընթերցանութիւնը։ Ես կարող եմ երևակայել, ինչքան անմխիթար պէտք է լինի հայերի դրութիւնը Թիւրքիայում և ինչպէս նրանց թշուառ դրութիւնը մօտ է ձեր սրտին, մանաւանդ որ անզօր էք զգում ձեզ նրանց օգնելու։ Դարձեալ անգլիացիներն են այն միակ ազգը որ հնար կունենային օգնել հայերին, բայց այժմ Անգլիան ունի մի կառավարութիւն, որ իմ կարծիքով, մարմնացած անաղնութիւն է։ Մեզ էլ զայրացնում է այն եղանակը, որով Դիզրաէլի վարվում է մեր երկրացի տրանսվալցիների հետ։ Այդ ամօթալի կառավարութենից հայերն էլ ոչինչ օգնութիւն սպասելու չունեն։ Եթէ, մինչև անգամ, Թիւրքիան ընկնելու լինի, ձեր ցեղակիցների համար, իմ կարծիքով, ոչինչ բարելաւութիւն սպասել չէ կարելի։ Այն ժամանակ Փոքր-Ասիան կատարելապէս կը տիրապետվի անգլիացիներով, որոնք եթէ չարունակելու լինեն այնտեղ Բիկոնսֆիլդի քաղաքականութեան եղանակը, նոյնը կանեն հայերի հետ, ինչ որ անում են նրանց հետ թիւրքերը, իսկ գուցէ աւելի էլ վատ կը վարվեն նրանց հետ։»

Ահա եւրոպացու, հոլանդացու կարծիքը Բիկոնսֆիլդի կառավարութեան մասին։

Եւ դա անհատական կարծիք չէ։ Շատերը Եւրոպայում բաժանում են այդ կարծիքը Անգլիայի այժմեան կառավարութեան մասին։

Չէ կարելի չուրախանալ որ այս բրօշիւրը, ինչպէս տեղեկանում եմ «Մշակիից», այժմ թարգմանվում է և ռուսերէն լեզուով, որովհետև որքան աւելի տարածվեն տեղեկութիւններ Հայաստանի մասին, այնքան լաւ է։ Գուցէ երկրի դրութեան չը ճանաչելն է պատճառը, որ նրա վրա այն ուշադրութիւնը չեն դարձնում, որին նա արժանի է։

Անդրէաս Արծրունի

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՅԻՑ

Կ. Պոլիս, մարտի 16/28

Հզօր ազգասիրութեանդ չնորհի, մեզ ալ նուէրք ռուսահայոց եղբարց յորդահոսան կը ժամանեն։ Սոքա ամենքեան ըստ ձեր հաշուոյ թէև 14,000 ռուբլի են, 13,000 ռուբլին ըստ մերի հաշուոյ սոսկ ձեր հանգանակութեան, իսկ 1200 ռուբլին «Մեղու» լրագրոյ հանգանակութեան արդիւնք են *)։

Մենք, աստ Տէր, ամենայն ճիգ կը թափենք, հայրենեաց պիտոյից չափոյ, մեր հանգանակութեան գումարն մեծացնելու համար, առաջի մեր աչաց ունելով միշտ սերմացանութեան խնդիրն, առանց որոյ, ընդ անվերջանալի սովոյ կուվել մեզ հարկ պիտի լինի։ Դուք ձեզէն գիտէք, թէ որչափ բազմապահանջ է մեր պաշտօնին այս մասն, ուստի կը համարձակիմք յիշեցուցանել ձեզ, թէ հարկ կայ յետին բարձր հրաւէր մի ևս կարդալու մեծ հայվաճառականութեան, որ եթէ զաչխարհ հայոց չէ կարող գնել, այլ ապահով եմք թէ կարող է գէթ սորա մարդն փրկել։

Այս առթիւ կը յղեմք ձեզ, մեր այսօր հրատարակած մի յայտարարութիւնն որ զուրկ չէ ի կարևորութենէ այսպիսի պարագայից մէջ։

Վանայ հեռագրական ճանապարհն վերահաստատուեցաւ։

Ահա Վասպուրական և Բասենոյ աշխարհք, որոց միմիայն հացին համար մեր գանձն սպառեցաւ, այսպէս նօթեալ կաղաղակեն։

Վան 6/18 մարտ.

«Իբրև կայսերական չնորհք, մեր խնդրած երկու հարիւր քիլէ ցորենոյ վերաբերեալ հեռագրոյն դեռ պատասխանն չառինք. Էլպաքի, Գաղայի մէջ, քան զհարիւր առաւել ոգիք սովամահ եղան, միւս գաղաներ, նուազ թշուառ վիճակի մէջ չեն, ճանապարհք ձմեռան պատճառաւ խափանեալ են, որոյ համար հզօր և արագ օգնութեանց կարօտ եմք։» Երեմիայ Եպիսկոպոս

Վան, 11/23 մարտ.

«Այսօր ձեր հեռագիրն ընկալայ, հոս քաղաքի մէջ արմտիք չը կան, գաւառիս ամբարին մէջ միայն տասն օրվան համար ցորեան կայ, եթէ ի Պիթլիսէ մեր խնդրած յիսուն հազար քիլէ ցորեանն չի հասնի, ապրել դժուարին և անկարելի պիտի լինի։» Աղաթօն

Թիֆլիս 14/26 մարտ.

«Վանէն կը հեռագրեն թէ Աղբակայ մէջ սովը անբացատրելի կերպիւ սաստկացած է, 150 ոգի անդ սովամահ եղած են, հարիւրաւոր աղջկունք ի գիւղօրէից փախստական Վանայ քաղաքին փողոցներուն մէջ կը թափառին և կը պառկին, երեք հարիւր մանուկ անօթութենէ հիւանդ են, Խրիմեան Արքեպիսկոպոս սոցա համար հիւանդանոց մի բանալ ձեռնարկած է, օգնեցէք սմա այս բարի ձեռնարկութեան համար։

Առանց զօրաւոր օգնականութեան, Վասպուրական պիտի կորնչի, մեծաքանակ գումարք միայն զայն կրնան փրկել։ «Մշակ» լրագրոյ խմբագիր

Արծրունի

Վան 14/26 մարտ.

«Հեռագրական թելոց տասն օրուընէ ի վեր ընդհատման պատճառաւ ուշ այլ ի նոյն ժամու ձեր 14, 15, 17, 20 թուականաւ հեռագրերն ստացանք. քաղաքն թշուառ, այլ գաղաներ մանաւանդ Պաչգալէ, Շիճաք, Մոկս և խաւացոր ահաւոր վիճակի մէջ են. Մատնախմբեր հաստատած եմք. վստահ եղէք ի սեզ, ձմեռն ահագին դժուարութիւնք կը յարուցանէ մեր ճգնանաց։

Մեր թշուառութեան առաջին պատճառն այս է, զի վեց ամիս յառաջ անխոհեմաբար արմտիք ծախուեցան։ Ցարքունի ամբարէ Պիթլիսի ցորեան խնդրեցինք, այլ Վիլայէթի կառավարութիւն դըժուարութիւն կը յարուցանէ փոխադրութեան մասին, եթէ իսիստ և արագ հրամանաց զօրութեամբ ի Պիթլիսէ մեզ օգնութիւն չի հասնի, բնաջինջ պիտի լինիմք։ Շնորհակալութիւն առ ամենայն բարերարս մեր։» Նախագահ Սովելոց Մասնախմբի

Խրիմեան

Կարին 4/16 մարտ

«Ի բաց առեալ Քարաքիլիսէի սովեալներն, Ալաշկերտի քաղաքին մէջ 2600 ոգի օրական պարենոյ յետին աստիճան կարօտ են։ Ձեր յղած գումարն անբաւական է։

Սովելոց Մասնաժողովոյ Ատենադպիր

Պալարեան

Կարին 1/13 մարտ

«Բասենոյ դաշտի բնակիչք ամենեքեան հացի կարօտ են. կաղաչեմք զի Ալաշկերտի համար ձեր յղած գումարի կէսն Բասենոյ դաշտին յատկացնէք, սոցա սերման կարօտն գրով պիտի յայտնեմք։

Սովելոց Մասնաժողովոյ Ատենադպիր

Պալարեան

Այս սրտաճմլիկ տողերն չատ են, զամենայն սիրտ թէ և քար, գթութեան մերձեցնելու, և մեք զայս ամենայն նախագուշակելով ոչ ունայն ազաղակեցինք, ոչ ունայն հանգանակութեան լայն ձև և ասպարէզ տուաք։

Այսօր ամբողջ Փոքր-Ասիա, ի Պաղտատէ մինչև ցկարին, ցՎան, ցՊիլէճիկ և ցՆիկոմիդիա, որպէս ի մօտոյ մանրամասնաբար պիտի յայտարարեմք նօթեալ կը հեծէ։

Սով կայ, երկիւղ կայ սովոյ ամառնային, վախ կայ և գուցէ սաստկագոյն երկրորդ սովոյ ձմեռնային, եթէ դրամական հիւծումն իսկ միանգամայն ի նկատի առնլով չի դնեմք այսօր մեր ամենայն կորովով ընդդէմ սովոյ ներկային։

Ուստի հրաւէր կը կարդամք հանգանակող մարմնոց, ըստ անաղնութեան համատարած սովոյ զիւրեանց աշխատութիւնն և այսոյժն բազմապատկելու, տուողաց կրկին տալու, ի գործ ողորմածութեան յեղգացողաց փութալ ողորմելու, հրաւէր կը կարդամք գլխաւորապէս կանացի սեռին, ամբողջ մարմնով սովոյ դէմ իւր գթութեամբն կանգնելու, զի պէտք է որ գիտնամք երբ դարնանային արևն մեր ճակատներն կը չոյէ, սով մերթ սառնաշունչ մերթ հրաշունչ զմարդ ի Հայաստան կը կաչկանդէ և ի Միջագետ կը խարշէ։

Սովելոց Կ. Պոլսի Կենտ. Մասն. Ատենապետ

Սերովբէ Կիւլպէնկեան

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

---

*) Այս նամակից յետոյ ստացանք մի նամակ, որի մէջ մասնաժողովը յայտնում է թէ ստացաւ մեզանից 15,000 ռ.։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Իր յատկութիւններով մարմնի մասերի, մանաւանդ ոտքի մատների քրտինքից առաջ եկած փտումն ոչնչացնող յայտանի նիւթը,

ԳԱԼՄԱՆԻՆ

անուանով, ծախվում է Եւրոպայի բոլոր մեծ քաղաքների դեղատներում և դրօգիստների մօտ։ Գլխաւոր դէպօ նիւթի հնարող Ֆարմացիի մագիստրոս Վ. ԿԱՐՊԻՆՍԿՈՒ դեղատան մէջն է գտնվում, Վարշավայում, Էլեկտորալնի փողոց, № 35։ Գալմանինի մեծ արկղիկը արժէ Վարշավայում 50 կոպ., աւելի փոքրը 30 կ.։ Պէտք է ըզգուշանալ խարդախումներից։

2—25 (1) Վ. ԿԱՐՊԻՆՍԿԻ

Nous recommandons aux jeunes gens qui désirent aller en France terminer leurs etudes, l'Institution ROUSSEL à MARSEILLE. (Cours Julien, 14).—Des soins particuliers sont, donnés aux langues vivantes. Sadresser á l'Institution, qui envoie un prospectus.

2—4

ՆԵՐԿԱՅ 1880 ԹԻՌԻՄ ԿԸ ՏՊԱԳՐՎԻ

„ԿԱՅԾԵՐ“

ՎԷՊ ՏԱՃԿԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՑ ԿԵԱՆՔԻՑ

Հեղինակութիւն ՐԱՖՖԻ

Վէպը բաղկացած կը լինի երկու առանձին հատորներից իւրաքանչիւրը կը բովանդակէ մօտաւորապէս 400 տպագրված երեսներ։ Ամեն մէկ հատորի գինն է 1 ր. 50 կ., իսկ միասին 3 ր.։ Մէկ հատորի համար առանձին ստորագրութիւն չէ ընդունվում։

Ստորագրվել կարելի է ԳԱՒԱՌՆԵՐՈՒՄ այն պարոնների մօտ, որոնք բարեհաճել են բաժանորդներ հաւաքել «ԿԱՅԾԵՐԻ» տպագրութեան համար, իսկ ԹԻՖԼԻՍՈՒՄ պէտք է դիմել «Մշակի» խմբագրատանը Յ. ՄԻՆԼԻՔ-ՅԱԿՈԲԵԱՆԻՆ։

Մամուլի տակից դուրս եկաւ դոկտոր Բօկի «Ուսումն առողջապահութեան» գրքոյկի հայերէն թարգմանութիւնը։ Գրքի պահեստը գտնվում է Զաքարիա Գրիգորեանցի Կովկասեան Գրավաճառանոցում։ Գինն է 35 կոպ.

Պ. ԱԴԱՄԵԱՆԸ ցանկանում է ԳՆԱԳՐՈՒԹԵԱՆ և գոյների բաղադրութեամբ ՆԿԱՐՉՈՒԹԵԱՆ դասեր տալ։ Պայմանների մասին կարելի է նրա հետ խօսել նրա բնակարանում, Գոլովինսկի պրոսպեկտի վրա, Մուխրանսկու տանը, Կլուբի տակ, առաւօտները 10—12 ժամ, և երեկոները 5—8 ժամ։ Դասերը կարող է տալ թէ իր բնակարանում և ցանկացողների տները այցելելով։ Նոյնպէս ընդունում է պատուէրներ ԿԵՆԴԱՆԱԳԻՐՆԵՐ նկարելու համար։

9—10

Օրերուսս գուրս եկան մամուլի տակից և վաճառվում են Զ. Գրիգորեանցի Կովկ. գրավաճառանոցում։

1. Ադամեան—քերթուածք և թարգմանութիւնք. Տփխիս 1880 թ. գինն է 1 ր. 25 կ.։
2. Դոկտոր Բօկ—Ուսումն առողջապահութեան Տփ., 80 թ. — 35 կ.։
3. Գրէյդուն—Տաւիղ յիսնաղի Տփ. 80 թ. — 30 կ.։
4. Ղուկասեանց—ընդհանուր պատմութիւն հայոց դպրոցների համար, հ. ա. Տփ. 80 թ. — 80 կ.։
5. Դամառ-Ռաթիպայ—մանկական երգեր 80 թ. անկազմ — 15 կ.։
6. Նոյնը կազմած — 25 կ.։
7. Սիլվիո Փէլլիքօ Ջոիմինիացին Փրանկիսկէ (Ֆրանչէսկա դա Ռիմինի). Դանտէի Ֆրանչէսկան, Լէօփարդիի առ Իտալիան. Տարօնոյ ծերը։ Ա. Մ. Ե. Պ. Տփ. 80 թ. գինն է — 70 կ.։

9—10

ԲԺՇԿԱՆՈՑ

ՀԻՒԱՆԴՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆԸ ԱՌԱՒՕՏԵԱՆ 9-ԻՑ ՄԻՆՉԵՒ 1 ԺԱՄԸ։

Երկուշաբթի. Դավրօնսկի կանանց հիւանդ. Օրալեվիչ ներքին հ., Բօտինեանց կանանց և երեխաների հ., Քիւչարեանց խիրուրգիական և աչքերի հ., Շտեմբօրսկի վիներական և կաշու հ., Բաբայեան ջղային և հոգեկան հ.։

Երեքշաբթի. Մինկեվիչ խիրուրգիական հ., Վզօրով վիներական և բողազի հ., Բէյլիս աչքի հ., Բախուտով. մանկաբարձական, կանանց և երեխաների հ. Կրասնօգլեադով, Լիսիցեվ և Վեմիշեվ ներքին հ.։

Չորեքշաբթի. Լիսիցեվ և Բուդկօվսկի ներքին հ., Շտէյմբօրսկի վիներական և կաշու հ., Աստուածատուրով կանանց հիւանդութիւնների։

Հինգշաբթի. Վզօրով վիներական և բողազի հ., Բօտինեանց կանանց և երեխաների հ., Լիսիցեվ և Վերմիշեվ ներքին հ., Քիւչարեանց սիֆիլիսի և սեռական օրգանների հ.։

Ուրբաթ. Դավրօնսկի կանանց հ., Մինկեվիչ խիրուրգիական հ., Կրասնօգլեադով և Լիսիցեվ ներքին հ., Բախուտով մանկաբարձական, կանանց և երեխաների հ., Շտէյմբօրսկի և Աստուածատուրով վիներական և կաշու հ., Բաբայեվ ջղային և ներքին հ.։

Շաբաթ Լիսիցեվ և Վերմիշեվ ներքին հ., Բաբով կուրծքի հ., Եանկովսկի վիներական և կաշու հ.։

Բացի այդ բժիշկ Վզօրով բժշկանոցի մէջ ընդունում է անվարձ աղքատ հիւանդներին ամենայն օր երեկոյեան 4—6 ժամը։

Բժիշկ Բաբաեվ չորեքշաբթի օրերը առաւօտեան 9-ից մինչև 11 ժամը ընդունում է իր տանը բժշկանոցի հիւանդներին էլէկտրական բժշկութեան և ներքին հ. համար։ Բնակարանը գտնվում է Սերգիեվսկայա փողոցի վրա, Բայանդուրովի տանը։

Աստանաբոյժ Օբրեխտ աղքատ հիւանդներին բժշկանոցի տոմսակով ընդունում է ամենայն օր, ամենայն ժամանակ։

Բացի կիրակի օրերից ամենայն օր առաւօտեան 9—11 ժամը բժշկանոցում լինում է մանկաբարձ կին հիւանդ կանանց ընդունելու համար։

Բժշկանոցի դիրեկտոր Լիսիցեվ։

Ամ. Միանսարեանցի ի ներքոյ յիշեալ տպագրութիւնների ամեն մի տպագրութեան մնացած բոլոր օրինակները միասին գնողներին (Թիֆլիս, Ջայոց Վանքի Մեծ և Փոքր փողոցների անկիւնում, տպագրողի սեպհական տանը, № 4|2, բնակարան № 6) կը վաճառուին յետագայ գներով։

1. Ջակական Դրնար, երգարան, 8 ծալ, եր. 712 և առանձին 32 եր. այբբենական ցանկ, երկուսը միասին . . . . . 70 կ.
4 Ջազար օրինակից մնացել է մօտ հազար օրինակ, մօտ 700 բուբլու։
2. Կանոնաւոր և վայելուչ գրութեան պատմութիւնը և տեսութիւնը, զանազան առանձին յաւելուածներով, 8 ծալ, եր. 274 . . . . . 20 կ.
1200 օրինակից մնում է մօտ 700 օրինակ, մօտ 140 բուբլու։
3. Վայելչագրութեան գաղափարներ, 4 ծալ, 24 երես։ 6 հազար օրինակից կը լինի մնացած մօտ 4 հազար օրին., մօտ 500 բուբլու։ . . . . . 10 կ.
4. Գունատ մելանով տպած վայելչագրութեան վարժութիւններ, որ տպածի վրա սև թանաքով գրելով, դիւրութեամբ կարելի լինի ուղղել և գեղեցկացնել ուսանողի գրութիւնը։ № 1—№ 5, հասարակ թղթի գնով, տ. ստօպան, կամ 480 թերթը, 4 բուբլի, մօտ 340 ստօպ, մօտ 1360 բուբլու։ Թերթը մի կոպէկից պակաս։
5. Տողաշարներ և տողացանցեր մեծ թաբաղա, 4 երես տպած, 6 հազար օրինակից մօտ 4 հազ. օրինակ կը լինի, մօտ 52 բուբլու, թերթը . . . . . 5 կ.
6. Կոմբ ուսուցչապետի և անգղիացւոց թագուհու բժշկի խնամատարութիւն երեխայոց, 8 ծալ, եր. 300։ . . . . . 15 կ.
1200 օրինակից մօտ 300 օրինակ կը լինի մնացած, մօտ 52 բուբլու։
Մի քանի այլ տպագրութիւններ մօտ 20 բուբլու։
Տպագրողը ինքը բնակվում է Ս. Պետերբուրգ, Знаменская, домъ № 22, кв № 7, на углу Басейной.

Վաճառվում է նոր հրատարակված «Յիսնաղի Տաւիղ» Ֆրէյդունի գրքոյկը պ. Զ. Գրիգորեանցի և Կենտրոնական գրավաճառանոցներում։ Գրքոյկի Գինն է 30 կ., դաւառներից ցանկացողները կարող են ուղղակի դիմել Գ. Յովհաննէս Սուզանաճեանցին հետեւեալ հասցէով. Тифлисъ. Ивану Артемьевичу Сузанаджіанъ. на Петхайнской ул. собственый домъ № 13.

1. Երզնկեանց քահանայ—Մանկական երգարան, երգեր և պար-երգեր ընդունված է Ներսիսեան և Գայանեան դպրոցներում. գինն է . . — ր. 20 կ.
2. Մեծատունեանց—Երգարան աղջկանց և աշակերտուհեաց Հայկական ուսումնարանաց . . . . . 1 ր. — կ.
3. Բժիշկ Բ. Նաւասարդեանց։ Դիֆտերիտ բողազայաւ . . — ր. 25 կ.
4. Բժիշկ. Դ. Տէր-Գրիգորեանց—Վարակիչ հիւանդութիւններ.

(Ծաղիկ, կարմրուկ, սկարլատին, բծաւոր տիֆ, անդրադարձ տենդ, դիֆտերիտ, ընդհատ տենդ, խօլերայ, դեղին տենդ, որովայնատիֆ և ժանտախտ։)

Սոցա յատկութիւններն, ծագման և տարածման եղանակներն և նախապաշտպանողական միջոցներ։

Վաճառվում են Զ. Գրիգորեանցի Կովկասեան գրավաճառանոցում։

8—8

Փետրվարի 12-ից ԲԱՅՎԵՑ իշխան ՍՈՒՄԲԱՏՕՎԻ տանը ԿՕՆԴԻՏԷՐԻ և ՀԱՅԱՐԱՐԻ (пекарня) մագազին «ВАРШАВСКАЯ ПЕКАРНЯ» վերնագրովը, որտեղ կը վաճառվին զանազան տեսակ խմորեղէններ, նոյնպէս կը վաճառվին զանազան տեսակ կօնֆէտներ արժան գնով։ Թէ փոքր և թէ մեծ քանակութեամբ ցանկացողները կարող են ստանալ ԻՄ ԳՈՐԾԱՐԱՆԻՑ։ Օտար քաղաքացիք կարող են դիմել հեռաւեալ հասցէով. СОЛОЛАКИ, ВЪ ВАРШАВСКОИ ПЕКАРНИ Мартиросу Ахназарову. Պատուէրները կը կատարվին ամենայն ճշդութեամբ, գնողներին մեծ զիջումն անելով և փոստի ծախսը մեզ վրա առնելով։ Կոնֆէկտների գինը ֆունտը 40 կոպէկից մինչև 1 ր.։

ДВОЙНАЯ ИТАЛІАНСКАЯ БУХГАЛТЕРІЯ

Մի երիտասարդ տալիս է հաշուապահութեան դասերը՝ բանկի, ֆաբրիկայի, առևտրական կոմմիսիոնէրութեան, երկաթուղու և այլն։

Ջարցնել Թիֆլիսի Կաղեանի Պալատում, կամ Սուրբ Նշանի փողոցում, Միրզոյ սուդի դիմացը, № 17 պ. Յակովբ Տէր-Յակովբեանցին։

3—5

ԹԻՖԼԻՍԻ ԳՈՐԾԱԿԱՏԱՐՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ստարշինաների խորհուրդը յայտնում է պ. պ. անդամներին, որ ընդհանուր ժողովի վճռին համեմատ՝ անդամական լրացուցիչ տուրքի 7 բուբլի վճարելը նշանակված է մինչև ապրիլի 1-ը 1880 թ. Իսկ ովոր չի վճարի այդ փողը նշանակված ժամանակամիջոցին, կը համարվի ընկերութեան անդամութենից հրաժարեցրած։

Յունվարի 31-ին 1880 թ. Նորին Կայսերական Բարձրութիւն Կովկասի Փոխարքան բարեհաճեցաւ հաստատել «Թիֆլիսի ընկերութեան հայերէն գրքերի հրատարակութեան» կանոնադրութիւնը։ Այս ընկերութիւնը մարտի 9-ին ունեցաւ ընդհանուր ժողով, որը ընտրեց իւր վարչութեան և խմբագրական մասնաժողով։

Այն անձինք, որոնք կը ցանկանան ընկերութեան անդամ գրուել, կարող են դիմել ընկերութեան գանձապահ պարոն Մովսէս Թաւադեանին Թիֆլիսի Առևտրական բանկայ առաւօտեան 9-ը ժամից մինչև 2 ժամը։ Իսկ այլ և այլ խնդիրներ և տեղեկութիւններ այդ ընկերութեան մասին ստանալու համար պէտք է դիմել ընկերութեան վարչութեան նախագահ՝ պարոն Սերգեյ Յովհաննիսեանին։ Վարչութեան ատենադպիր Ա. Քիշմիշեան։

4—10

Տպագրութեան համար պատրաստ են «Դօն Կարլոս» (հետաքննութիւն ճշմարտութեան) Պրէսկոտի, «Աբրահամ Լինկօլն՝ ստրուկներին ազատող» Վիլհելմ Հոֆմանի, և Մոլիէրի «Ամուսնացողներին խրատ» հայ թարգմանութիւնները։

Թարգմանվումեն Մոլիէրի հետ «Տարտիւֆ կամ Կեղծաւոր» և «Կեղծ հիւանդ» կատակերգութիւնները։

Անցած փետրվարի 17-ից նօտարական ակտով վերջացնելով բոլոր դրամական հաշիւները իմ առևտրական ընկերակցութեան վերաբերութեամբ Թիֆլիսի 2-դ գիլդիայի վաճառական ՍԵՐԳԷՅ ԳՐԻԳՈՐԵՎԻՉ ԼԱԶՐԵՎԻ հետ, սրանով յայտնում եմ, որ եթէ մի որ և իցէ մարդու մօտ կը գտնվին ՄԻՆՉԵՒ ՆԵՐԿԱՅ ԹԻՒԸ, իմ նրան տուած տոմսակներ (росписки) մասնաւոր և բանկային վէքսէյներ, և բոլոր ուրիշ պարտամուրհակներ և ակտեր, կամ անուավեր եմ համարում և ինձ պարտաւոր չեմ համարում վճարել։

Թիֆլիսի 2-դ գիլդիայի վաճառական ԴԱՆԻԷԼ ԱՐՏ. ԱԼԱՎԵՐԴՈՎ։

Дозволено Цензурою 1 Апрѣля 1880 г. Тифлисъ. Տպարան Ա. Ա Միխելսոնի Типографія А. А. Михельсона